

անպայման հնազանդում ամուսնուն: Չնայած դրան, չի թույլատրվել կնոջ նկատմամբ ամուսնու չափազանց խիստ վերաբերմունք: Ողանդավորական համայնքն իր միջավայրում ձգտել է խուսափել ամուսնալուծություններից, սպառնալով ծանրագույն պատժով՝ վտարմամբ համայնքից:

6. Ընտանեկան ծեսերին՝ ամուսնությանը, կնունքին, թաղմանը մասնակցել է կրոնական ողջ համայնքը, ինչպես և հյուրերը հարևան մոլոկանյան գյուղերից: Մոլոկանների քնտանեկան ծիսակարգը մինչև վերջին ժամանակներն ամուր պահպանվում էր:

7. կրոնական հարաբերությունների համակարգը կնիք է թողել հավատացյալներին ոչ միայն հասարակական և քնտանեկան կյանքի, այլև նյութական մշակույթի առանձին կողմերի վրա:

8. Հազուստի խստագույն համատարրությունն քնդգծել է մոլոկանյան համայնքի թվացյալ հավասարությունը: Վերածվելով մոլոկանության ազգազրկական առանձնահատկության, հազուստն սկսել է խողալ սոցիալական նշանի դերը, մատնանշելով այն կրողի պատկանելությունը որոշակի էթնոկոնֆեսիոնալ խմբի: Մոլոկանների ծիսաուտեստային առանձնացվածությունը սահմանափակումների քնդհանուր համալիրի քաղկացուզիչ մասն է կազմել:

9. կրոնական գործոնը, ներամուսնական մեկուսացվածությունն, այլալեզու և այլադավան միջավայրում քնակության գյուղական լուկալ ձևը լպսստել են մոլոկանների՝ որպես էթնոկոնֆեսիոնալ քնդհանրության պահպանմանն ինչպես Արևելյան Հայաստանի, այնպես էլ ողջ Անդրկովկասի պայմաններում:

Հ.Ա.ԵՄԱՅԱՆ

ՀԳԹ

ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱՆՔՆԵՐԸ

/քստ պեղածո նյութերի/

1. Հայաստանի հուշարձանների հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ սկսած մ.թ. առաջին դարերից հնագույն, քիչ արտադրողական մակույկաձև աղորիքին փոխարինում և ապա լայնորեն տարածվում են քարե նրկանքները, անհամեմատ հեշտացնելով և արագացնելով հացահատիկի աղումը:

2. Կենտրոնում անշարժ երկաթե լիսեռ ունեցող լայնանցք

միջևադարյան երկյանքներն աչքի են քննելու մարդ կառուցվածքով: Պահպանելով անտիկ շրջանի ավանդույթները, դրանք բաժանվում են երկու տիպի: Առաջին տիպի երկյանքների ստորին անշարժ աղացաբարի շփվող մակերեսը կոնսժե է, իսկ վերին շարժականինը՝ ղոգավոր, որն ամուր գրկում է ստորին աղացաբարը: Հայաստանում նման երկյանքներ հայտնի են Գառնիի, Հացառտի, Այգեվանի V-VII դդ. շերտերից և հետագա դարաշրջաններում չեն հանդիպում:

3. Երկրորդ տիպի երկյանքներ հայտնի են ավելի շատ և բազմազան ձևերով: Արանք ևս հանդիպում են Հայաստանի նույն դարերի հուշարժաններում և հարատևում են մինչև XIV դ.: Ըստ ձևերի և օգտագործելու սկզբունքի, այս տիպում կարելի է առանձնացնել ստորին և վերին աղացաբարերի երկուսական տարբերակ: Ատորին անշարժ աղացաբարերի առաջին տարբերակի ստորին և շփվող մակերեսները հարթ են: Հայտնի են Այգեվանի V-VII դդ., Գվինի, Գառնիի, Խնրաբերի X-XIV դդ. շերտերից: Երկրորդ տարբերակի ստորին աղացաբարին ունեն հարթ շփվող և կիսակլոր ստորին մակերես: Այս հանգամանքը հետազոտություն է տալիս եմթադրելու, որ սրանք տեղադրվում էին ոչ խոր փոսերի մեջ, այլ սպիտ խիստ կտատանվիին, նվազեցնելով երկյանքների արտադրողականությունը: Նման աղացաբարը գտնվել են Այգեվանի V-VII դդ., Գառնիի և Արտաշատի X-XIV դդ. շերտերից:

4. Վերին շարժական աղացաբարերի առաջին տարբերակի կենտրոնական անցքի տրամագիծը հասնում է 10-12 սմ-ի: Պտույտի ժամանակ այս տիպի աղացաբարերն անցքի տրամագծի չափով տատանվում են, ղգալիորեն նվազեցնելով կրկանի արտադրողականությունը: Նման աղացաբարեր հանդիպում են Գվինի, Գառնիի, Բերքաբերի, Արտաշատի X-XIV դդ. շերտերից: Երկրորդ տարբերակի վերին աղացաբարերի կենտրոնական անցքի ներսի կողմի հակադիր եզրերին արված են փոսիկներ, ուր ամրացվել են կենտրոնում անցք ունեցող երկաթե պահանգներ, որի միջով անցել է ստորին աղացաբարի լիսեոք: Այս դեպքում վերին աղացաբարը պտտվելիս տատանումներ չէր ունենում: Բացի այս տեխնիկական նորամուծությունից, երկրորդ տարբերակի վերին աղացաբարերն առանձնանում են նաև արտաքին մակերեսի հարդարանքով: Արանք կենտրոնական անցքի շուրջը երիզված է հաստ ելուստով, որն անցքին տալիս է ձգարի տեսք և նպաստում հացահատիկի համաչափ լցմանը: Որոշ օրինակներում անցքը շրջավոր հաստ երիզագծից շարունակվում է ուղղահայաց ելուստ, որի ծայրում փոսիկ է արված՝ ընդհանր ամուր տեղադրելու համար:

5. Քննարկվող նյութերը ցույց են տալիս, որ միջնադարյան երկանքները ձևերով և կառուցողական առանձնահատկություններով չեն տարբերվում ժամանակակից երկանքներից: Այս հանգամանքը հաղրաբուրություն է քննարկում վերականգնելու միջնադարյան երկանքներով աշխատելու գործընթացը և պարզաբանելու հացահատիկից ալյուր և ձավարեղեն ստանալու եղանակը: Օգտագործելով նաև ազգագրական դիտարկումները, կարելի է ենթադրել, որ առաջին տիպի երկանքները կարող էին օգտագործվել քնջուլի ձեթ ստանալու համար /տես Ա.Գ.Հոբոսյան, Քնջուլի ձեթ հանր. /դաշախանա/՝ կառուցվածքը և տեխնոլոգիան, ,,Երիտասարդ գիտնականների կոնֆերանս,, /թեզիսներ/, Երևան, 1984/:

Ս.Ա.ԵՄԱՅՐՆՍ

ՀԱԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆՁԵԿԱՐՑԱՆ ՄԵՏԱՂԵ ՄՊԱՍԵՐ

1. Հնագույն Հայաստանի նյութական մշակույթը ներկայացնող բազմաբանալի արժեքավոր գտածոների մեջ ուրույն տեղ ունի մետաղե սպասքը՝ բաղկացած կաթասներից, գավաթներից, դուլլից, թասերից, շերեփներից և կեռիկներից, պատրաստված հիմնականում բրոնզից, ինչպես նաև ոսկուց և արծաթից:

2. Մի մեծ խումբ են կազմում կաթասները, որոնք կարելի է բաժանել չորս տիպի: I տիպին են վերաբերում մյլին բրոնզեդարյան /մ.թ.ա. XVII - XVI դդ./ հուշարձաններից՝ կիրովականից, Լոռի-բերդից, Արուժից, Երևանից գտնված օրինակները: Սրանք ունեն բարձր, կենտրոնում նեղացող իրան, կլոր դուրս ձևված շուրթ և կլորավուն հատակ: Երկու խոշոր կանթերն ամրացված են իրանի վերին մասին և ուղղահայաց բարձրանում են շուրթից վեր: կաթասների II տիպն են կազմում Լժաշենից, Լոռի-բերդից, Շիրակավանից գտնված օրինակները /մ.թ.ա. XIV - XII դդ./: Սրանք ունեն կլորավուն հատակ և իրան, ներս ձևված ուսեր և փոքր ինչ դուրս ձևված շուրթ: Ուղղահայաց դրված կիսակլոր երկու կանթերը բարձրանում են շուրթից վեր: Ուշ բրոնզեդարյան հուշարձաններից հայտնի կիսաշրջանաձև նմուշները կազմում են կաթասների III տիպը: Լոռի-բերդի և Ախթալայի օրինակներն ունեն երկու, իսկ Արթիկից՝ երեք կլորավուն ուղղահայաց ամրացված կանթ: IV տիպին են վերաբերում Դաշքեսանի շրջանի Չովդար գյուղի ուշ բրոնզեդարյան